ՀՀ ԲԱՐՁՐ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Internet Society

UNION OF OPERATORS

03.06.2023

Մամուլի հաղորդագրություն

ՀԱՅՏՆԻ Է ԵՐԵՎԱՆՈՒՄ ԿԱՅԱՆԱԼԻՔ ԿԱՊԻ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԳԱԳԱԹՆԱԺՈՂՈՎ 2023-Ի ԾՐԱԳԻՐԸ

Հունիսի 6-7-ը Երևանում կանցկացվի «Ապահովելով հասանելիություն բոլորին՝ Եվրոպա և տարածաշրջան» խորագրով Կապի եվրոպական գագաթնաժողով 2023-ը:

Միջոցառման երկու օրերի ընթացքում ոլորտի մասնագետները աշխարհի տարբեր երկրներից, այդ թվում՝ Հայաստանից, Վրաստանից, Ղրղզստանից և Հունաստանից կմիավորեն իրենց ջանքերը՝ գտնելու լուծումներ հեռավոր համայնքներում ինտերնետ հասանելիություն ապահովելու հնարավորությունների ստեղծման համար:

Գագաթնաժողովի առաջին օրը՝ հունիսի 6-ին, կանցկացվի 3 պանելային քննարկում.

- **Ռազմավարական մոտեցումները հասանելիության խթանման գործում**

Այս պանելային քննարկումը կենտրոնանալու է համակարգված ջանքերի և կարգավորող շրջանակների վրա, որոնք լրացուցիչ հասանելիություն և ցանցային լուծումներ են տրամադրում՝ ինչպիսիք են Համայնքային ցանցերը: Փորձառու մասնագետները տարածաշրջանից և ամբողջ աշխարհից կփոխանակեն իրենց փորձը և մոտեցումները:

- **Ֆինանսավորման նորարարական մեխանիզմներ և լուծումներ**

Այս պանելային քննարկման ժամանակ մասնագետները կկենտրոնանան ֆինանսավորման այն նորարարական մեխանիզմների վրա, որոնք ստեղծելով և օգտագործելով՝ հնարավոր կլինի ապահովել հասանելիություն ամենուր:

- **Տեխնիկական մարտահրավերներ և հնարավորություններ**

Աշխարհի բնակչության 1/3-ը դեռ Ինտերնետ հասանելիությամբ ապահովված չէ: Մարդիկ ողջ աշխարհում, այդ թվում նաև՝ Հայաստանում, համախմբվում և կառուցում են իրենց սեփական Ինտերնետ կապը՝ համայնքային ցանցերի, կոոպերատիվների և կապի այլ լրացուցիչ լուծումների միջոցով՝ ապահովելով հասանելիություն ամենուր:

Նույն օրը նաև տեղի կունենա Համայնքային ցանցերի չեմպիոնների պարգևատրման արարողությունը: Մրցանակը տրվում է համայնքային ցանցերի կառուցման գործում մեծ ներդրում ունեցած անձանց:

Գագաթնաժողովի երկրորդ օրը՝ հունիսի 7-ին, տեղի կունենա **կլոր սեղան-քննարկում՝ «Ինտերնետ հասանելիությունը համայնքների զարգացման գրավական»** թեմայով, որի ընթացքում մասնակիցները կներկայացնեն Ինտերնետի խելամիտ օգտագործման ճանապարհով գյուղական համայնքների հզորացման իրենց մոտեցումները:

Բանախոսների և քննարկվող թեմաների վերաբերյալ այլ մանրամասներ ներկայացված են միջոցառման օրակարգում՝ https://bit.ly/3pNtA1a

Միջոցառմանն առցանց տարբերակով մասնակցելու համար անհրաժեշտ է գրանցվել՝ https://bit.ly/41KDVs2

Կապի եվրոպական գագաթնաժողովի համակազմակերպիչներն են Internet Society (Ինտերնետ հասարակություն, ԱՄՆ) կազմակերպությունը և Հայաստանի օպերատորների միությունը՝ ՀՀ Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության աջակցությամբ:

Միջոցառման գործընկերներն են «Արփինետ» ընկերությունը, «Ինտերնետ հանրություն» ՀԿ-ն, «Համայնքային ցանցեր» զարգացման հիմնադրամը, «Ինտերնետ հասարակության Հայաստան հատված» ՀԿ-ն :

Կապի եվրոպական գագաթնաժողովին մասնակցելու համար անհրաժեշտ է նախապես գրանցվել՝ https://bit.ly/41KDVs2:

***Internet Society*-ի մասին**

Internet Society-ն (Ինտերնետ հասարակություն) ձևավորվել է 1992թ. Վինթ Սըրֆի, Բոբ Քանի և այլոց կողմից, ովքեր Ինտերնետի տեխնիկական զարգացման գործում առաջամարտիկներից են եղել:

Internet Society-ն աջակցում և նպաստում է ինտերնետի զարգացմանը՝ որպես գլոբալ տեխնիկական ենթակառուցվածք, մշակում է համացանցի օգտագործման քաղաքականություն, կառուցում է համայնքային ցանցը և նպաստում վերջինիս աշխատունակության ապահովմանը:

Կազմակերպության աշխատանքը հավատարիմ է նպատակներին, որպեսզի ինտերնետը լինի բաց, գլոբալ կապակցված, անվտանգ և վստահելի՝ ձգտելով համագործակցել բոլոր նրանց հետ, ովքեր կիսում են այս նպատակները:
https://www.internetsociety.org/

Հայաստանի օպերատորների միության մասին

«Հայաստանի օպերատորների միություն» ՀԿ ստեղծվել է 2016 թվականի դեկտեմբերին՝ միավորելով հեռահաղորդակցության և հարակից ոլորտների ընկերություններին և ներկայացնելով նրանց շահերը ներպետական և միջազգային կառույցներում:

Միությունն իր նպատակների իրագործման ընթացքում կոչված է լուծել ինտերնետի ու հեռահաղորդակցության ոլորտների զարգացմանը, գործարար մթնոլորտի բարելավմանը, ինտերնետի և

հեռահաղորդակցության ոլորտների օրենսդրական դաշտի բարելավմանը, ՏՀՏ ոլորտի կրթական ծրագրերի արդիականացմանը և թվային գրագիտության բարձրացման ուղղված խնդիրներ:

Բազմակողմանի գործունեության հիմքում երկրի հավասարաչափ զարգացումն է, ՀՀ ողջ տարածքում որակյալ կապի հասանելիության ապահովմանը նպաստելը և համացանցի անվտանգ կիրառությունը:

https://www.operator.am/

Կոնտակտային անձ
Հայկուհի Գրիգորյան
Կապի եվրոպական գագաթնաժողով 2023
Հանրային կապերի և մեդիա հարաբերությունների
պատասխանատու Հայաստանում
Հեռ.՝ +374 93 32 44 25
Էլ. փոստ՝ pr@operator.am